

ԱՆՑԵԱԼԻ ԳԻՇԵՐՈՒԱՆ ՄԷՋ

Մնայ Տարօնի խորնի աւանին մէջ, առաջին նայուածքս հանդի-
պեցաւ մարմարեայ սեան մը՝ մինակ կանգնած հրապարակին մէջ, վերջին
մնացորդ ապարանքի մը, հետուն հորիզոնին վրայ դղեակի մը աւերակ-
ները կանաչութեանց մէջ կ'իջնէին՝ արխնագոյն վտակի մը նման: Ամէն

ինչ շուրջս անցեալի մասին կը խօսէր առանց անիկա պատմելու, ամէն քայլիս արձանագիր մը հարցում մը կը թուէր այն դարերու մասին որ կանխած էին գոյութիւնս. երբ մտայ ընկերութեան յորձանքին մէջ, նախարարական պալատներու գանձերն ու նկարները, ընկերական կարգեր, հասարակաց ժառանգութիւններ որ չէին կրնար մէկ կեանքի մէջ ամբարուած ըլլալ, ինձ կը խօսէին այն դարերու մասին՝ ուր այս ամենը շիթ առ շիթ պատրաստուած էր, ինչպէս շիթաքարերու նկարչական քարայր մը՝ ուր բնութեան դարաւոր լուս աշխատանքը կը զգաս:

Եւ նստայ անցեալին հանդէպ, մտահոգ և տխուր, ինչպէս պատանեակ մը որ սարսափած կը կանգնի իր ապագայի անձանթին առջև: Յետոյ երբ թարգմանչաց նաւը գլխ հասցուց Խաւրիոյ, Եգիպտոսի և Յունաստանի ծովափները, երբ եգիպտական բուրգերու, հռոմէական լեզգէններու և յունական գլուխ գործոցներու հանդէպ գտայ գլխ՝ այն ատեն զգացի որ անցեալի ծանօթութիւնը մտքիս փափագը միայն չէր, այլ ամբողջ ազգի մը՝ ճակատագրին աղբիւրը: Ազգ մը՝ անդէս իր անցեալին՝ մարդ մ'է որ յիշողութիւնը կաթուածով մը կորսնցուցած՝ անկարող է այլևս դանախու գէպի իր մանկութիւնը և երիտասարդութիւնը, որ յաւիտեան ոչնչացած են իրեն համար:

Ազգ մը՝ որ զուրկ է իր անցեալէն՝ կեանքի գեանագամբանին մէջ մոլորեալ մըն է, կորսնցուցած է վերագարձի թիւը ու կը խարխափէ մթութեան մէջ: Ազգ մը անցեալէն զուրկ՝ ծնողական ճոխ կտակէ զբրկուած մըն է, որ իր ճակտի ամբողջ քրտինքով պիտի չկարենայ իր կեանքը երջանկացնել:

Անցեալը հայրենիքի մը ամենէն պատասպարուած սահմանագլուխն է, շիրմաքարերէ կազմուած՝ ամէն թշնամեաց անմերձենալի:

Ի՛վ Հայեր, կ'ըսէի ինքնիրենս, սիրեցէք ձեր անցեալը, ինչպէս ձեր ծնողքը, ձեր յարկը, ինչպէս ձեր անձը, որուն մտքի և զգացման նախորդ գոյութիւնն է այն՝ մեր խանձարուրքէն անդին տարածուած, ժամանակի բնդարձակութեան մէջ: Այս մտածումներով ձեռքս առի ուղեորի ցուպը և սկսայ Հայաստանի և իր պատմութեան անկոխ դերութիւններուն մէջ յառաջել: Ամէն ծերունի, ամէն պառաւ ինձ համար անցեալի վկայ մըն էր, ամէն հին կերտուած՝ արձանի ամէն բեկոր ինձ համար անցեալի վկայ մըն էր. ամենուն կրկնել տուի իրենց յիշողութիւնները, իրենց ծանօթ վիպասանական երգերը. վանայ լճակի սփին ցցուած քարածայտերը իրենց մոզական տառերով հին կոյսրութեան մը աւանդալէպը պատմեցին՝ լուսնկայ գիշերուան մը մէջ որ կեանքիս գեղեցկագոյնը եղաւ: Էրասմի թերակղզոյն մէջ, Արտաշատի պարխալները ազգային մեծ հարստութեան մը զուլեղներգութիւնը նուագեցին:

Եւ հիմայ կը վերագոհանամ դէպ ի ձեզ, ո՛վ կեանքիս ընկերներ, եթանաստուն տարիներու բեռան տակ, զգալով որ կեանքս՝ մնտուած

անցեալիս մասն եղաւ արդէն : Փոքրագոյններ կանխեցին քան զիս դէպի գերեզմանը, և պիտի չկարենամ հպարտօրէն յիշատակներու գանձած աւարը ցուցնել :

Քեզի՛, հիմնադիր հայ գրականութեան նուէր կը բերեմ մեր ցեղին պատմութիւնը . դուն հայ սերունդները փրկեցիր կորուստէ, ես փորձեցի մեռեալները վերադարձնել . դուն Հայաստանի սպառգան ստեղծեցիր, ես քեզի, ո՛վ անմահ, անոր ամբողջ անցեալը կը բերեմ :

Հ. Ս. Տ. ՄՈՎՍԷՍԵԱՆ